

«Տառապանքի ուղիներով»

Հասմիկ Ալազան

Ես՝ Հասմիկ Ալազանս, հանդիսանալով Վահրամ և Մարո Ալազանների օրինական և միակ ժառանգը, ներկայացնում եմ իմ բռնադատված ծնողների պատմությունը՝ հիմնված իրենց հուշերի վրա: Մորս և հորս հուշերը պատմում իրենց բռնադատված լինելու կարգավիճակի, անարդարությունների և տառապանքների մասին:

Մայրս՝ Մարո Շահենի Մուրադյան-Ալազան, ծնվել է 1908 թվին Ալջավազ՝ Արծկե գավառի Խոռանց գյուղում, դառնալով Թավաքյալենց Շահենի բազմանդամ ընտանիքի (չորս տղա, երկու աղջիկ) 6-րդ երեխան: Անհոգ մանկություն է ունեցել մինչև 1915թ. այն օրը, երբ թուրքական բանակը անսպասելիորեն խուժում և շրջափակում է գյուղը: Ներակայացնում եմ որոշ մեջբերումներ կանեն մորս՝ առայժմ անտիպ «Իմ կյանքի ողբերգությունը» հուշերից:

«...Սիփանի փեշերով, լճի երկարությամբ մեր գյուղ մտավ ու ասքյարը (այդպես էին կոչում թուրքական բանակին նրա համար, որ նա ամբողջովին սև էր հագնում): Ժողովուրդը՝ մեծ, փոքր կտուրներին կանգնած դիտում էին այդ անսովոր զորաշարժը: Ջորքը շրջապատեց Հեթումենց (Եթմենց) խոտի մեծ մարագը, որի մի կեսը լցված էր զարմանքով: Կանչեցին գյուղի զգիրին և ինչ որ թուղթ մեկնեցին նրան: Նա փողոցից փողոց, տանից տուն մտնելով բղավում է:

-Եթմենց մարագում ժողով կա, ոչ մի տղամարդ չբացակայի, հուքմաթի հրամանն է:

Երբ գյուղի տղամարդիկ մտան մարագ նրանց մեծը կողպեց մարագի դուռը, զորքին դառնալով ձեռքը վեր բարձրացրեց: Ու սև ասքյարը հրացանի սվինները դեպի մարագը ուղղեց և խտացրեց շարքերը: Կանանց հանգիստ ու միամիտ հետաքրքրությունը լացուկոծի, վայնասունի փոխվեց: Մի քանի ասքյար բահ ու քլունգով բարձրացան մարագի կտուր, մեծացրին էրթիկը և մի քանի դաբոն նավթ լցրեցին ներս, տարբեր կողմերից լուցկի վառեցին: Բոցն ու ծուխը միախառնված երկինք բարձրացավ: Մարագի կտուրը փլվեց: Մարագը լռեց...:»

Մայրս ընտանիքի ողջ մնացած անդամների՝ մոր, մեծ քրոջ և եղբոր հետ բռնում է գաղթի ճանապարհը: Ճանապարհին մայրը մահանում է: Եղբորն ու քրոջը կորցնում է և միայնակ շարունակում գաղթի զարհուրելի տեսարաններով լի ճանապարհը: Մի ռուս զինվորի օգնությամբ անցնում է Բանդիմահու գետը և հայտնվում Էջմիածնի որբանոցում: Հետո՝ Նախիջևանի որբանոց, նորից Էջմիածին, վերջում՝ Երևանի աղջիկների 2-րդ որբանոց: Այդ տարիներին մայրս ծանոթանում է գրական-հասարակական-քաղաքական բուռն կյանքով ապրող, արդեն կայացած գրող Վահրամ Ալազանի հետ: 1926 թվականին ամուսնանում են:

1936 թ. տրոցկիստ, նացիոնալիստ, Բերիայի դեմ մահափորձ կազմակերպող խմբի անդամ և նմանատիպ այլ անհիմն մեղադրանքների հիման վրա հորս դատապարտում են տասը

տարվա ազատագրվման: Մորս հեռացումն են կոմերիտմիությունից, Թելմանի անվան դպրոցից, որտեղ աշխատում էր պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում սովորելուն զուգահեռ:

1937 թ. նոյեմբերին մեղադրելով որպես Հայաստանում խորհրդային ազգայնական աջ-տրոցկիստական կազմակերպության անդամ Վահրամ Ալազանի կնոջ, ով թաքցրել է ամուսնու հանցավոր գործունեությունը, այսինքն կատարել է հանցագործություն, և որպես հակահեղափոխականի, ժողովրդի թշնամու ընտանիքի անդամ, մորս բանտարկում են:

«1937 թվի նոյեմբերի 29-ն էր. Հայաստանի խորհրդայնացման 17-րդ տարեդարձը: Լենինի հրապարակը զարդարված էր Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի և Քաղբյուրոյի մյուս անդամների լուսանկարներով: Հրապարակի մյուս մասում` դեպի Աբովյան փողոցը գետնին, ցցերի վրա դրված էին մի քանի ծաղրանկարներ, որոնցից մեկում Աղասի Խանջյանը զուռնա էր փչում, իսկ Չարենցը, Բակունցը և Ալազանը թև-թևի գցած պարում էին:

Մի այլ նկարում Արշակ Չոպանյանը ջուր էր լցնում Խանջյանի, Չարենցի, Բակունցի ջրաղացին: Կանգնեցի, երկար նայեցի այդ նկարներին, հուզված ու ցասումով լցված, քայլերս ուղղեցի դեպի տուն: Ցերեկվա ժամը մեկն էր: Մի մեքենա կանգնեց լուսամուտից առաջ: Երկու չեկիստ դուռս թակեցին:

-Ընկեր Մարո, մի քանի րոպեով մեզ հետ պետք է գաք Ներքին Գործոց ժողկոմատ, մի փոքր հարց կա պարզելու:

Սիրտս գուշակում էր, որ ինձ բանտարկելու են: Գնացինք: Ինձ տարան մի սենյակ, ու նստած էին հինգ ճարպակալած չեկիստներ: Նրանցից մեկը` Աբուլյանը, անուն-ազգանունս գրելուց հետո, հպարտ, հաղթական կեցվածքով ասաց.

- Քաղաքացի Մուրադյան դուք բանտարկված եք:

Ուղեկցող չեկիստը ինձ տարավ գետնահարկ, հրելով մտցրեց մի կամերա: Կես ժամ հետո կամերա մտավ կոկորդիլոսի դեմքով, երկար քթով, միջինասիական թասակը գլխին մի կին և խիստ հրամայական տոնով ասաց.

-Հանվիր:

-Ինչու?

-Քեզ հրամայում են հանվել:

Ես լրիվ մերկացա: Նա հագուստներս մեկ-մեկ շոշափեց, սեղմրտեց, կիսավարտիքիս ռեզինները հանեց, գուլպաների կապիչներն ու գոտիները վերցնելով հրամայեց հագնվել: Հետո պայուսակիս պարունակությունը թափեց սեղանին, վերցրեց նրանում եղած գումարը: Քանդեց երկար ու խիտ մազերս, սկսեց գլուխս քրքրել, շպիլկաները վերցրեց և դեռ էլի ինչ-որ բան փնտրել: Հետո նա մեջքով ինձ դարձած սկսեց ինչ-որ բան գրել, այդ ժամանակ ես սեղանից վերցրեցի մատիտս և խրեցի զգզված մազերիս մեջ, որը ինձ հետագայում շա՛տ պետք եկավ:

Ուշ գիշեր էր, հանկարծ կամերայի դուռը բացվեց: Ներս մտավ խելակորույս Իզաբելա Չարենցը: Ինձ տեսնելով գիրկս ընկավ, կես հայերենով, կես ռուսերենով ասաց.

– Ախ, աստված իմ, ինձ փողոցում բռնեցին, Բոժիկին ու Ադոկին (Անահիտին ու Արփենիկին) խլեցին, ինձ գցեցին մաշինեն ու Չեկա բերեցին: Մարո ջան, ասա ինչ անեմ, ես կգժվեմ:

Մեր կամերա բերեցին Եվգինե Գալոյանին, Աստղիկ Եսայանին, Ժենյա Թաթարյանին և մեր ամուսինների և եղբայրների դահիճ՝ Մուղդուսու քույր Մարիայի (Մաշային):

Գիշերը կամերայի դուռը բացվեց.

- Վեշներդ հավաքեք, դուրս եկեք:

Բակում մեզ մի մեծ, սև մեքենա էր սպասում: Մի քանի չեկիստ մեր իրերը մեքենայի մեջ շարտեցին, մեզ էլ ոչխարների պես հրմշտելով ներս հրեցին: Մեքենան լուսամուտ չունեւր, մուօ, օդ չկար: Մենք բարձրաձայն լալիս ու անիծում էինք մեզ այս օրին հասցնողին:

- Ձեններդ, ձեններդ կտրեք, թե չէ կկրակեն,- ասաց հսկող չեկիստը:

Վերջապես տեղ հասանք: Գնում ենք մուօ, երկար միջանցքով, որի երկու կողմերում երկաթյա դռներ էին, մեծ կողպեքներով փակված: Պարզվեց մեզ Կենտրոնական բանտ էին բերել: Վեցիս տեղավորեցին երկար ու նեղ մի խցում,որը բուրում էր, արտաքնոցի և խոնավ բորբոսի գարշահոտությամբ: Խցի երկարությունը երեք մետր էր, իսկ լայնությունը հազիվ մետր ու կես լինեւր: Որտեղ իրերը դնում էինք, ձեռքներս մարդկային կղանքի էր դիպչում: Սկսեցինք բղավել: Կյուչնիկը դուռը բացեց:

- Այս ինչ է, մեզ արտաքնոցում եք տեղավորել:

-Ուրիշ ոչ մի ազատ կամերա չկա, սա իզայատոր էր, շան որդի ուզալովնիկները կեղտոտում էին գետնին, և կեղտով պատերին իրենց անուններն են գրել: Ոչինչ հիմա լամպ, ավել ու ջուր կբերեմ, կմաքրենք: Կյուչնիկը ամեն ինչ բերեց, և այդ հաճելի աշխատանքը ես ու Ժենյա Թաթարյանը արեցինք:

Ինը ամսվա մեջ մեզ մի անգամ, այն էլ գիշերով մեզ կեսժամյա զբոսանքի հանեցին: Ինը ամիս շարունակ մենք մեր բնական պահանջները կատարում էինք բոլորի ներկայությամբ, պարաշայի մեջ (պարաշա ասվածը մի մեծ ցինկե բաք էր, կափարիչով ծածկված): Շաբաթը մեկ երկու հոգով բռնում էինք դրա բռնակներից, տանում, թափում էինք...

...Բանտախուց մտավ Աբդուլա կնոջ՝ Գյորչակի հետ:

- Քույրիկներ վեշներդ հավաքեք, անկարգ պահելու համար ձեզ տանեն Առաջին Կալ-գաղութ:

Բոլորս սարսափահար դուրս եկանք: Մեզ սպասում էին չորս բեռնատար մեքենաներ: Մեքենաների չորս անկյուններում կանգնեցին հրացանավոր չորս զինվոր:

...Մեքենաները կանգնեցին ընդարձակ ու խոպան մի տափաստանում միահարկ, մի դռնանի, բազմաթիվ փոքրիկ լուսամուտներով, 100 մետր երկարություն, մոտ 50 մետր լայնություն ունեցող մի շինության մոտ: Պատերը շարված էին մեծ-մեծ, անմշակ լեռնային քարերից, որոնց ձեղքերից տեսնում էինք գաղութի աշխատողների անցուդարձը: Հատակը հողից էր, առաստաղը ծածկված էր եղեգի ճյուղերով, վրան լցված հողի բարակ շերտ: Ներսում խիտ շարքերով դրված էին ժանգոտած, երկաթյա մահճակալներ խոտե ներքնակներով:

...Հերթապահ Մուկուչը կանգնեց կամերայի վերնամասում, գրպանից մի ցուցակ հանեց:

Իզաբելա Չարենց
Բատիկյան Մարգո
Սիմոնյան Արաքսյա
Մուղդուսու Մարիա
Բակունց Վարիա
Խուդոյան Արմիկ:

- Ում անուն ազգանունը կարդացի թող իրերով դուրս գա կամերային:

Մենք ենթադրեցինք, որ նրանց Սիբիր էին տանելու:

...Հանկարծ, երկինքը մռայլվեց, սկսեց անձրեւ գալ: Ինչ առատությամբ որ անձրեւը դրսում էր, նույն առատությամբ էլ ցեխախառը անձրուաջուրը առաստաղից, լուսամուտներից, պատի ձեղքերից ներս էր լցվում: Այդպես թրջված, գազազած, անքուն լուսացրինք: Միայն լուսադեմին իր շքախմբով, բաժու քլունգով հայտնվեց գաղութի պետը: Մեր բողոքին ի պատասխան լսեցինք:

- Էսա մեր պայմանները, ձեզ նմանների համար սա էլ դեռ շատ է:

-

Ութ ամիս էր, ինչ Կալ-գաղութում էինք, բայց ոչ մի անգամ բաղնիք չէինք գնացել: Անընդհատ խնդրում, աղաչում էինք, որ լողանալու հարմարություն ստեղծեն, բայց իզուր:

Լենինականից մեզ մոտ Սիրուշ անունով մի կին կար: Մի օր նա ասաց.

-Աղջիկներ ուզում եք ես ձեզ մի բաժակ տաք ջրով լողացնեմ: Մենք ծիծաղեցինք, բայց այնուամենայնիվ հաջորդ օրը ես, Եվգինե Գալոյանը և Ռուզան Եսայանը, մեզ հասանելիք մեկ բաժակ տաք թեյով մոտեցանք Սիրուշին: Գաղութում երեք հատ ցինկե թասեր կային: Սիրուշը յարաքանչուրիս թասում լցրեց մեկ բաժակ թեյ, մեջը մանրեց օձառ, ճաշի գդալները մեզ տալով ասաց.

- Էս ձեզ, հարեք էնքան մինչեւ թասի լցվի փրփուրով: Հետո սրբիչի մի ծայրը թաթախեցինք փրփուրի մեջ և քսեցինք մեր մարմիններին: Մյուս ծայրը թաթախեցինք սառը ջրի մեջ և նորից քսեցինք մարմիններին... ցայվեցինք, լողացանք ու մաքրվեցինք: Մնացած փրփուրի մեջ գլուխներս մտցրինք, մազերս այնքան տրորեցինք մինչեւ վրայի փրփուրը անհետացավ: Հետո սանրի վրա հագցրինք բամբակ, ու գլուխներս սանրեցինք այնքան մինչեւ բամբակի մաքրվելը:

Այդ նշան էր, որ գլուխներս «մաքուր է»: Եվ իսկապես «լողանալուց» հետո մարմիններս բավականին հանգստանում էր: Այո, սիրելի ընթերցող, բանտային պայմաններում ինչեր ասես չես սովորի.....:

...1939 թվին ինձ ազատեցին կալանքից: Երեք տարի հետո միայն պարզվեց որ «որդին պատասխանատու չէ, իր սրիկա հոր արարքների համար.Ստալին»

Իսկ կինը պատասխանատու՞ է իր ազնիվ ամուսնու չարած հանցանքի համար:»



Լուսանկարում՝ երիտասարդ Մարո Ալազանը

1949 թվին հորս, էլի նույն անհիմն մեղադրանքներով, արդեն ցմահ աքսորում են Սիբիր (Կրասնոյարսկի մարզ գյուղ Բոգուչան): Այդ տարիներին մորս բախտին արժանացած շատ մտավորականների կանայք հրաժարվում են իրենց «ժողովրդի թշնամի» ամուսիններից: Իսկ մայրս ինքնակամ, հաղթահարելով հազար ու մի անպատմելի դժվարություններ, անցնելով երկու ամիս տևող տանջալից ու խիստ վտանգավոր ճանապարհի, հասնում է Սիբիր, հասնում իր ամուսնուն.....: Հայրս շատ տեղերում և շատ անգամներ է ասել. «Եթե Մարոն չլիներ, ես աքսորում ողջ չէի մնա»:

Հիմա մի քանի մեջբերում աքսորավայրում անցկացրած տարիներից:

«...Մոսկվայից հրաման եկավ. «Բոլոր աքսորականների և նրանց ընտանիքի ոչ աքսորական անդամներին արգելել աշխատել դպրոցում, մանկապարտեզում և մանկատանը»:

Նույն օրվա հրամանով ես հեռացվեցի և դպրոցից և մանկատանից:

Այս լուրը դժգոհություն առաջացրեց նաև տեղացիների մոտ, նրանք շատ գոհ էին, որ իրենց երեխաներին կրթում են Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից եկած ակադեմիկոս, պրոֆեսոր աքսորականներ:

Մենք զրկվեցինք օրվա հացից: Ես ստիպված հեռագրեցի Սիրվարդին՝ Ալազանի քրոջը, խնդրեցի որ ինձ բրդյա թելեր ուղարկի: Սկսեցի օր ու գիշեր գործել գուլպաներ, շալեր, տաք զգեստներ: Դրանք արագորեն վաճառվում էին, թե տեղացիների, թե աքսորականների կողմից: Վաճառում էի նաև մեր հավերի օրվա ածած ձվերը: Այնպես որ մենք նորից սկսեցինք

շնչել և ապրել: Բարեբախտաբար այդ ժամանակ վերացրել էին հացի և մթերքի քարտերը, ով դրան ուներ, կարող էր մթերք և ու սև հաց գնել.....»



Լուսանկարում՝ Վահրամ Ալազանը՝ աքսորավայրում

«...Աշխատանքից հեռացվելուց հետո գրկվեցի վառելափայտ ստանալու իրավունքից: Բքախառն քամին թակում էր մեր դուռը: Ցրտից կապտել, կծկվել նստել էինք: Ստիպված որոշեցինք գնալ Տայգայից փայտ բերել: Դրսում 60 աստիճան սառնամանիք էր: Ալազանը մի հաստ պարան վերցրեց, տանից դուրս եկանք: Ոչ մի արգելք, ոչ մի հսկիչ, ուժներս որքան կպատի կարող ենք ծառ հատել: Ալազանը ամենահաստ ու տապալված մի ծառի պարան կապեց, պարանի մի ծայրից իմ, մյուսը իր մեջքին ամրացրեց: Մենք ձեռքներս աջ ու ձախ պարզելով, կորացած մեջքով քաշում էինք հսկա ծառը: Այլևս անհնար էր. մենք կողք-կողքի ձյան վրա պառկեցինք: Նա ամեն կերպ աշխատում էր ինձանից թաքցնել իր հոգնածությունը՝ ես իրենից:

- Ախ, Մարո ջան, այդ մեծ հոգատարությունն է կապել ձեռքերս ու ոտքերս, միայն քեզ համար եմ ապրում, թե չէ ես վաղուց էի իմ կյանքին վերջ տվել:
- Վեր կաց, վեր բավական է խոսես, պստիկ եմ, բայց ճստիկ եմ, քուռակ եմ, բայց ծիու հետ լուծ կքաշեմ: Նստելով, կանգնելով, իրար սիրտ տալով հասանք տուն, երկու ամսվա վառելափայտով ապահովված....»

1954թ. լիովին արդարացվելուց հետո միասին վերադառնում են Երեւան: Կիւյան փողոցում ստանում են բնակարան: Կարծես ամեն բան իր տեղը պիտի ընկներ: Սակայն այն ողիսականը, որով անցել էր հայրս անհետևանք չի մնում: Մոտ տասը տարի տարբեր հիվանդություններ նրան անշարժ գամում են անկողնուն, իսկ մայրս էլ մինչեւ հորս մահը գամվում է նրա մահճին: Ժամանակի շատ նշանավոր, անվանի մարդիկ, ովքեր ծանոթ էին Ալազան ամուսինների կյանքին, անընդհատ մայրիկիս հորդորում, անգամ պարտադրում էին, որ նա գրի առնի իր կյանքի պատմությունը:

Հորս մահից հետո(1966թ) մայրս ձեռնամուխ է լինում այդ գործին, և 1973թվին, մահվանից մեկ տարի առաջ, երկու հատորից կազմված մեքենագիր հուշերը (940 էջ) ավարտին է հասցնում: Ճիշտ է հուշերը վերնագրված է «Իմ կյանքի ողբերգությունը» որտեղ իրոք շեշտը դրված է մորս կյանքի պատմության վրա, սակայն այս հուշերը առժեքավոր են նաև այլ առումով:

Հատկապես 20-30-ական թվականներին, անընդհատ լինելով հորս կողքին, մայրս առիթ է ունեցել մտերիմ հարաբերությունների մեջ լինել գրական- քաղաքական երեք սերնդի այնպիսի ականավոր ներկայացուցիչների հետ, ինչպիսիք էին Ա. Խանջյան, Չարենց, Իսահակյան, Շիրվանզադե, Ջ.Եսայան, Վ.Փափագյան, Մահարի, Նորենց, Շիրազ, Հ.Հովհաննիսյան, Ալ. Նադեմ, Պ.Տիգինա, անգամ Ն.Կ.Կրոպսկայա և ուրիշներ:

Մայրս հուշերում մեծ տեղ է հատկացրել ժամանակի նշանավոր մարդկանց հետ իր հանդիպումներին, ինչը խոսում է հուշերի ճանաչողական արժեքի մասին:

Հուսով եմ, որ շուտով այդ հուշերը կիրատարակվի:



Լուսանկարում՝ Վահրամ և Մարո Ալազաններ

Վերջում ուզում եմ ձեզ ներկայացնել , ծնողներիս նվիրած գրքերի վրա հեղինակների կողմից արված մի քանի մակագրություն:

«Առյուծի կաթով սնված Մարոյին, իմ ցեղի գերազանց աղջկան հիացնունքով սարսափած»:

Վահրամ Փափազյանից

28.03.56թ.

«Ալազանին - իսկական Մարդուն, բանաստեղծին և քաղաքացուն:

Մարոյին և մեր գրականության բազմավաստակ մշակի պահապան հրեշտակին:

Ա-ին - մեր պոեզիայի հմուտ մշակին:

Մ- ին- նրան պահպանող սուրբ հրեշտակին»

Վահագն Դավթյան

27.06.61թ.

«Շատ սիրելի Մարոյին, իմ անխորտակելի և անմոռանալի Ալազանի տառապալից կյանքի անդավաճան ու անձնագրի ընկերուհուն սիրով»

Վաղարշակ Նորենց

09.04.69թ

«ԳՈՎԵՐԳ ՍՏԱԼԻՆԻՆ»

անտիպ

Քո մարդասեր գործերից արյուն է կաթում,
Հայր, ուսուցիչ, առաջնորդ, դեղնադեմ դահիճ,
Թաթո խորը մխրճած արյան մակարդում,
Գայլը եղավ քեզ դայակ, իսկ բորենին ուսուցիչ:

Վ. Ալազան

1961թ.